



ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

16.03.2016թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի թիվ 21/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Վազա-Ֆարմ» ՍՊԸ-ի 09.03.2016թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-21/16 բողոք) և ուսումնասիրելով ««Նորք» հոգեբուժական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշումն ու կից փաստաթղթերը, ինչպես նաև ԳԲԽ-21/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Կենտրոն) 14.03.2016թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. «Վազա-Ֆարմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն) 16.10.2015թ. ներկայացված բողոքով «Վազա-Ֆարմ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ «Վազա-Ֆարմ» ՍՊԸ-ն գտնելով, որ Պատվիրատուի «ՆՀԿ-ՇՀԱՊԶԲ-16/4» շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու

ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում խախտվել են Ընկերության իրավունքները:

«Վագա-Ֆարմ» ՍՊԸ-ն, ցանկություն ունենալով մասնակցել Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժիններին, հրավերի պահանջներին համապատասխան՝ 2016թ. հունվարի 27 ներկայացրել է մասնակցության հայտ:

Հրավերի կից պայմանագրի նախագծի թիվ 1 հավելվածի «Ձեռք բերման պայմանները բաժնում» սահմանված պահանջի համաձայն՝ մատակարարման ենթակա դեղամիջոցը պետք է գրանցված լինի Եվրամիության կամ ԱՄՆ-ի, կամ Ճապոնիայի դեղերի գրանցամատյաններում, որի հավաստիքը կամ էլեկտրոնային հասցեն պետք է տրամադրվի մասնակցի կողմից:

Ընկերությունը նշել է, որ «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետությունում թույլ է տրվում ներմուծել, արտադրել, պահպանել, բաշխել, իրացնել և կիրառել միայն Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերը: Դեղորայքի գնման նպատակով դեղերի տեխնիկական բնութագրերը կազմվում են ՀՀ կառավարության 02.05.2013թ. «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները հաստատելու մասին» թիվ 502-Ն որոշման պահանջներին համաձայան, ըստ որի գնման առարկա հանդիսացող դեղի գնման տեխնիկական բնութագրերը պետք է նկարագրեն ձեռք բերվող դեղի դեղաձևը, դեղաչափը, թողարկման ձևը, տեղափոխման պայմանները, պահպանման պայմանները և դեղի պիտանիության ժամկետը: ՀՀ տարածքում դեղերի շրջանառության համար պարտադիր պայման է հանդիսանում միայն տվյալ դեղի Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցված լինելու փաստը, այլ ոչ թե Եվրամիության կամ ԱՄՆ-ի, կամ Ճապոնիայի դեղերի գրանցամատյաններում գրանցված լինելը հավաստող փաստաթուղթը: Իսկ ՀՀ կառավարության 02.05.2013թ. թիվ 502-Ն որոշմամբ սպառիչ և ամբողջ ծավալով ամրագրված են դեղերի գնման դեպքում դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման պահանջները և դրանցում բացակայում են դեղորայքի գնման նպատակով կազմվող դեղի տեխնիկական բնութագրում՝ Եվրամիության կամ ԱՄՆ-ի, կամ Ճապոնիայի կամ

որևիցե այլ երկրի դեղերի գրանցամատյաններում դեղի գրանցված լինելը սահմանելու իրավունքը:

Այսպիսով, Ընկերության պնդմամբ՝ պայմանագրի նախագծով սահմանված այդ պահանջը հանգեցնում է սույն գնման գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը և գնման ընթացակարգի հնարավոր մասնակիցների համար չի ապահովում մրցակցության հավասար պայմաններ, որը հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ և 12-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով ամրագրված պահանջների կոպիտ խախտում, մասնավորապես 5-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին:

Ընկերությունը նշել է նաև, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար, իսկ 2-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը:

Հիմք ընդունելով վերագրյալը և առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 3-րդ մասով, այն է՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները գնումների բողոքարկման խորհրդին, Ընկերությունը խնդրել է.

1. որպես միջանկյալ ընթացակարգ՝ կասեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ցանկացած որոշման գործողությունը, քանի որ նման պահանջներով ընթացակարգը գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ է սահմանում, որոնք խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր

մասնակցությունը գնման գործընթացին, որոնք հանգեցնում են գնումների մասին օրենսդրության սկզբունքների խախտման:

2. Դադարեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.01.2016թ. թիվ 1 որոշմամբ «ՆՀԿ-ՇՀԱՊՁԲ-16/4» ծածակագրով շրաջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ հայտարարելու մասին որոշումը, իսկ պայմանագիր կնքած լինելու դեպքում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ ապօրինի հայտարարել «ՆՀԿ-ՇՀԱՊՁԲ-16/4» ծածակագրով շրաջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը:

2. ««Նորք» հոգեբուժական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

«Վազա-Ֆարմ» ՍՊԸ-ի 09.03.2016թ. ներկայացրած բողոքի վերաբերյալ ««Նորք» հոգեբուժական կենտրոն» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 14.03.2016թ. թիվ 110/16 գրությամբ հայտնել է, որ Ընթացակարգի հրավերում ներառված պայմանագրի նախագծի տեխնիկական բնութագրում սահմանված լրացուցիչ պայմանը, որը վերաբերում է գնման առարկայի Եվրոմիության կամ ԱՄՆ-ի կամ Ճապոնիայի դեղերի գրանցամատյաններում գրանցված լինելու հավաստիքին, բխում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 12-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը և 12-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից, դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության **որակին**, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ **հիմնված միջազգային ստանդարտների** և Հայաստանի

Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա պահանջներից:

«Ավան» հոգեբուժական կլինիկայում» 2011-2014թ. իրականացվել են համեմատական հետազոտություններ՝ «Օլանզապին» ազդող նյութով դեղերի ազդեցությունը հոգեկան խանգարումներ ունեցող անձանց բուժման արդյունավետության վրա խնդրի շուրջ (հետազոտությունների արդյունքները կցվել են գրությանը): Նշված հետազոտությունները ցույց են տվել, որ մրցույթների արդյունքում հաղթած էժանագին դեղամիջոցով բուժման ընթացքում տեղի են ունեցել ֆինանսական միջոցների տնտեսումներ դեղի ձեռքբերման փուլում, սակայն հոսպիտալացումների հաճախականացման, հաշմանդամության ձեռքբերման և հոգեկան խնդիր ունեցող անձանց կյանքի որակի վատթարացման պատճառով կտրուկ ավելացել են ծախսերը բուժման փուլում, ինչը չի հանգեցնում բուժման ամբողջ ծրագրի իրականացման ֆինանսական և ինչն առավել կարևոր է՝ բժշկական օգնության արդյունավետությանը: Տվյալ հետազոտությունները ցույց են տվել նաև Եվրոմիության կամ ԱՄՆ-ի կամ Ճապոնիայի դեղերի գրանցամատյաններում գրանցված դեղամիջոցով բուժական առավելությունները, ուստի և նման պայմանը նախատեսված է գնման ընթացակարգի հրավերով: Ներկայացված հետազոտության արդյունքները ընդունված և հաստատված են ՀՀ հոգեբույժների ասոցիացիայի կողմից և հրապարակված են «հոգեկան առողջության հայկական հանդես» հրատարակությունների շարքում: Եվրոմիության կամ ԱՄՆ-ի կամ Ճապոնիայի դեղերի գրանցամատյաններում գրանցված դեղամիջոցով բուժման արդյունավետության մասին վկայում են նաև «Նորք» հոգեբուժական կենտրոն» ՓԲԸ-ում 2015թ. անցկացված հետազոտության տվյալները, որոնք ցույց են տալիս վիճակագրական ճշգրիտ դեղի և բուժ. մեթոդի ազդեցությունը:

Պատվիրատուն նշել է, որ վերը նշված հետազոտությունները, որոնք իրենցից, ըստ էության, ներկայացնում են նաև կլինիկական փորձաշրջանի իրականացում, հիմք են ընդունված ՀՀ առողջապահության նախարարության կողմից, որը Հայաստանի Հանրապետությունում հանդիսանում է առողջապահական ոլորտը կարգավորող,

դեղերի անվտանգությունն ապահովող առողջապահական քաղաքականություն իրականացնող լիազոր մարմին: ՀՀ առողջապահության նախարարության քաղաքականությունը միտված է Հայաստանի Հանրապետության որակյալ դեղերի կիրառման ապահովմանը, այլ ոչ թե տնտեսապես շահավետ, բայց անորակ դեղերի կիրառմանը: ՀՀ կառավարության 20 սեպտեմբերի 2000թ. թիվ 581-Ն որոշման համաձայն՝ ՀՀ առողջապահության նախարարության թույլտվությամբ կարող են ներմուծվել և վաճառվել նաև ՀՀ-ում չգրանցված դեղեր: ՀՀ առողջապահության նախարարի 23 դեկտեմբերի 2015-ի թիվ 3696-Ա հրամանով հաստատվել է ««Նորք» հոգեբուժական կենտրոն» ՓԲԸ-ում **առաջին** փսիխոտիկ էպիզոդի կլինիկայում հոգեկան հիվանդների արդյունավետ բուժման կազմակերպման ծրագիրը, որը հիմնված է նաև վերոնշյալ ուսումնասիրությունների արդյունքների վրա: Հարկ է փաստել, որ հետազոտությունների արդյունքներով ապացուցված այն դեղը, որը կիրառման ընթացքում բերել է հոգեկան վիճակի վատթարացմանը, հոսպիտալացումների քանակի ավելացմանը և բուժման արդյունավետության էական անկմանը, մատակարարված է եղել հենց բողոքաբեր կողմի՝ «Վազա-Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից: ՀՀ առողջապահության նախարարությունը իրականացնում է նաև կենտրոնացված կարգով «Օլանզապին» ազդող նյութով դեղի գնումը և բաշխումը, որն ուղված է **քրոնիկական** հոգեկան հիվանդություններ ունեցող անձանց պահպանողական բուժմանը: ««Նորք» հոգեբուժական կենտրոն» ՓԲԸ-ում իրականացվող ծրագրի շահառուները **առաջնակի** հոգեկան խանգարումներ ունեցող անձիք են, և նրանց բուժական մեթոդիկական տարբեր է, իսկ արդյունքներն առավել դրական: Նշված հիվանդների երկու խմբերը համասեռ չեն, որով և պայմանավորված է երկու տարբեր ծրագրերի իրականացումը:

Հայաստանի Հանրապետությունում ներկրվող դեղերի գրանցման գործընթացը կարգավորող իրավական ակտերով նախատեսված է գրանցման պարզեցված ընթացակարգ /30 օր պարզեցված ընթացակարգի դեպքում, մնացած հիմնական դեպքերում 180 օր/, որի համաձայն և Եվրոմիության, և ԱՄՆ-ի, և Ճապոնիայի դեղերի գրանցամատյաններում գրանցված դեղամիջոցները Հայաստանի Հանրապետությունում գրանցվում են արագ և պարզեցված ձևով: Դրա հիմքում ընկած է այն, որ

նշված առաջատար երկրներում դեղերի գրանցման ընթացակարգերում պարտադիր պայման է հանդիսանում կլինիկական փորձաշրջանի իրականացումը, որը ապացուցում է դեղի որակյալ լինելու փաստը և բացահայտում անորակությունը, ինչը չի իրականացվում Հայաստանի Հանրապետությունում դեղի գրանցման գործընթացում: Հայաստանի Հանրապետությունում դեղի գրանցման գործընթացի նման տարբեր մոտեցումը ապացուցում է այն փաստը, որ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում են նշված երկրների գրանցամատյաններում գրանցված դեղերի որակյալ լինելու փաստը: Վերոնշյալ հանգամանքներից ելնելով՝ գնման ընթացակարգի մասնակիցները կարող էին նաև գնման ընթացակարգին մասնակցել Եվրոմիության կամ ԱՄՆ-ի կամ Ճապոնիայի գրանցամատյաններում գրանցված «Օլանդապին» ազդող նյութով ցանկացած դեղով, անկախ դրա Հայաստանի Հանրապետությունում գրանցված լինելու փաստի: Նմանատիպ դեղերի քանակը բավական շատ է և ապահովում է ազատ մրցակցությունը: Ընդ որում, գնման ընթացակարգում ընտրված մասնակիցը ներկայացրել է դեղամիջոց, որը գրանցված է Հայաստանի Հանրապետությունում, բավարարում է նաև լրացուցիչ պահանջին և դա հրավերի պահանջներին բավարարով միակ դեղը չէ, որը գրանցված է Հայաստանի Հանրապետությունում, ուստի նույնը, ինչպես նաև պահանջներին բավարարող ցանկացած այլ դեղամիջոցը կարող էր ներկայացնել նաև բողոքաբեր կողմը: Հայաստանի հանրապետությունում չկա որևիցե իրավական ակտ, որով արգելվում է այս կամ այն ընկերությանը ներմուծել և մատակարարել ՀՀ առողջապահության նախարարության կողմից հավաստագրված կամ թույլատրված ցանկացած դեղամիջոց: Հետևաբար, հրավերով նախատեսված լրացուցիչ պայմանը չի կարող դիտվել որպես խտրական կամ մասնակցություն սահմանափակող:

Պատվիրատուն հայտնել է նաև, որ ելնելով վերը նշված վիճակագրական, բուժական և իրավական փաստերից որպես որակական ցուցանիշ հրավերում ներառել է բողոքի առարկա հանդիսացող լրացուցիչ պայմանը, և գտնում է, որ բուժման ծրագրի իրականացումը Եվրոմիության կամ ԱՄՆ-ի կամ Ճապոնիայի դեղերի գրանցամատյաններում գրանցված դեղամիջոցով օբյեկտիվորեն հիմնավորված է և բխում է Օրենքի պահանջներից: Ընդ որում ՀՀ կառավարության

02.05.2013թ. թիվ 502-Ն որոշմամբ դեղամիջոցի որակական հատկանիշների չափանիշների սահմանման պահանջ չկա, իսկ Օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջների համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից, դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության **որակին**, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

Պատվիրատուն նշել է նաև, որ «իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն՝ իրավական ակտերի միջև հակասությունների դեպքում գործում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և սույն օրենքով նախատեսված ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերը: Սույն դեպքում հստակ գործում է նշված օրենքի դրույթը և Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները գերակայում են ՀՀ կառավարության 02.05.2013թ. թիվ 502-Ն որոշման պահանջներին:

Պատվիրատուն հայտնել է, որ բողոքաբեր կողմը մասնակցել է գնման ընթացակարգին և ներկայացրել է ապրանք, որը անկախ լրացուցիչ պայմանին բավարարելուն կամ չբավարարելուն, չի բավարարել հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի նվազագույն պահանջներին, ընդ որում մասնակիցը սահմանված կարգով ուներ հնարավորություն Պատվիրատուից պարզաբանումներ և բացատրություններ պահանջելու, սակայն դա չի ցանկացել կիրառել, այլ մասնակցել է ընթացակարգին և գնային առաջարկով կատարել հետևյալ հայտարարությունը. «Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված «ՆՀԿ-ՇՀԱՊՁԲ-16/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի **հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը**, «Վազա-Ֆարմ» ՍՊԸ-ն առաջարկում է պայմանագիրը կատարել հետևյալ գներով»: Սույն

հայտարարությամբ մասնակիցը փաստացի համաձայնվել է հրավերի և պայմանագրի նախագծի պահանջներին: Միաժամանակ կարևոր հանգամանք է այն, որ «Վազա-Ֆարմ» Ընկերությունը մեկ այլ բողոքով արդեն իսկ դիմել էր Կենտրոնին և բողոքի բովանդակությունում բարձրաձայնել էր վերոնշյալ լրացուցիչ պայմանի առկայության և դրա օրենքի անհամապատասխանության մասին, սակայն դա չէր ներկայացրել, որպես բողոքի առարկա, այնուհետ բողոքի դրական արդյունքի չհասնելով՝ կրկին ներկայացրել է սույն բողոքը: Ընկերությունը կարող էր մեկ բողոքարկման ընթացակարգով պարզել բոլոր հարցերը, որոնց մասին նախապես տեղյակ էր: Այս ամենով ընկերությունը ակնհայտորեն խոչընդոտում է բուժման ծրագրի ժամանակին և արդյունավետ իրականացմանը, որը շատ կարևոր է և գործ ունի մարդկային հոծ խմբի առողջության հետ:

Ամփոփելով վերը նշված բոլոր հանգամանքները, փաստերը և իրավական ակտերի դրույթները՝ Պատվիրատուն հայտնել է, որ «ՆՀԿ-ՇՀԱՊՁԲ-16/4» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է ՀՀ գնումների մասին օրենսդրության բոլոր պահանջների խիստ պահպանմամբ և մասնակցի բողոքը անհիմն է:

3. ԳԲԽ-21/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 15.03.2016թ. եզրակացությունը և առաջարկել՝

«Վազա-Ֆարմ» ՍՊԸ-ի՝ 09.03.2016թ. բողոքը բավարարել մասնակի:

1. գնահատող հանձնաժողովի 18.01.2016թ. թիվ 1 որոշմամբ «ՆՀԿ-ՇՀԱՊՁԲ-16/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ հայտարարելու մասին որոշումը դադարեցնելու մասով բողոքը բավարարել:

2. «ՆՀԿ-ՇՀԱՊՁԲ-16/4» ծածակագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրանակներում պայմանագիր կնքած լինելու դեպքում ապօրինի հայտարարելու պահանջի մասով բողոքը մերժել:

4. ԳԲԽ-21/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-21/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ««Նորք» հոգեբուժական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՆՀԿ-ՇՀԱՊՁԲ-16/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Վազա-Ֆարմ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերում ներառված պայմանագրի նախագծի տեխնիկական բնութագրում սահմանվել է, որ **մադակարարման ենթակա դեղամիջոցը պետք է գրանցված լինի Եվրամիության կամ ԱՄՆ-ի, կամ Ճապոնիայի դեղերի գրանցամատյաններում**, որի հավաստիքը կամ էլեկտրոնային հասցեն պետք է տրամադրվի մասնակցի կողմից:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն ուսումնասիրելով «Վազա-Ֆարմ» ՍՊԸ-ի 09.03.2016թ. ներկայացրած բողոքը, գտնում է հետևյալը.

«Դեղերի մասին» ՀՀ օրենք 15-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում թույլ է տրվում ներմուծել, արտադրել, պահպանել, բաշխել, իրացնել և կիրառել միայն Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դեպքերի:

«ՀՀ պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները հաստատելու մասին» թիվ 502-Ն որոշման 2-րդ կետի համաձայն՝ **«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության**

օրենքով նախատեսված կարգով հաստատված դեղերի գնումների պլանում ընդգրկվում են միայն Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական լիազոր մարմնի կողմից սահմանված՝ Հայաստանի Հանրապետության հիմնական դեղերի ցանկում և Հայաստանի Հանրապետության դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր) ընդգրկված **դեղերը**: Հայաստանի Հանրապետության հիմնական դեղերի ցանկը, դեղերի պետական գրանցամատյանը (ռեեստր) տեղադրված են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պաշտոնական «www.moh.am» կայքում:

«Գնումների մասին» ՀՀ օրենք 5-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին:

Նույն օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար: Իսկ 2-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը:

Վերոհիշյալ իրավական նորմերը ուղղակիորեն սահմանում են, որ գնումների գործընթացների կազմակերպման գերակա սկզբունք է համարվում մրցակցության ապահովումը, հնարավոր մասնակիցների համար ոչ խտրական պայմանների սահմանումը, ինչպես նաև վերջիններիս կողմից գնման գործընթացին մասնակցության համար չհիմնավորված խոչընդոտներ չստեղծելը: Ավելին, մյուս բոլոր նորմերն ուղղված են օրենսդրական վերոհիշյալ սկզբունքների կիրարկումն ապահովվելուն և ենթակա են դրանց:

Միևնույն ժամանակ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն՝ **Հայաստանի Հանրապետությունում դեղերի շրջանառության համար միակ պայման է հանդիսանում դեղը օրենքով նախատեսված համապատասխան**

լիազոր մարմնի կողմից Հայաստանի Հանրապետությունում գրանցված լինելու հանգամանքը:

Ուստի, Խորհուրդը գտնում է, որ նման օրենսդրական կարգավորման պայմաններում Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանված մատակարարման ենթակա դեղամիջոցը Եվրամիության կամ ԱՄՆ-ի, կամ Ճապոնիայի դեղերի գրանցամատյաններում գրանցված լինելու պահանջը չի բխում «ՀՀ պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները հաստատելու մասին» թիվ 502-Ն որոշման պահանջներից, խտրական է, հակասում է մրցակցության ապահովման սկզբունքին և հանգեցնում է գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը: Վերոհիշյալի արդյունքում Պատվիրատուի կողմից խախտվել են Օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի և 12-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի պահանջները:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի այն պնդումը, որ ՀՀ կառավարության 2000թ. սեպտեմբերի 20-ի թիվ 581-Ն որոշման համաձայն՝ ՀՀ առողջապահության նախարարության թույլտվությամբ կարող են ներմուծվել և վաճառվել նաև Հայաստանի Հանրապետությունում չգրանցված դեղեր, ապա Խորհուրդն արձանագրում է, որ վերոհիշյալը վերաբերելի չէ բողոքի փաստական հանգամանքներին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասով և 6-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Վազա-Ֆարմ» ՍՊԸ-ի՝ 09.03.2016թ. բողոքը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.01.2016թ. թիվ 1 որոշմամբ «ՆՀԿ-ՇՀԱՊՁԲ-16/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ հայտարարելու մասին որոշումը դադարեցնելու, իսկ պայմանագիր կնքած լինելու դեպքում «ՆՀԿ-ՇՀԱՊՁԲ-16/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի

միջոցով գնում կատարելու ընթացակարգը ապօրինի հայտարարելու մասին բողոքը բավարարել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝



Ավետիսյան Վարդան

Անդամ՝



Գրիգորյան Էդվարդ